


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓՈՒՐ

Նամակ կամ ուր եւ ԳՐՈՒՐԻՆ
աւեօ Ե ուղղել առ

ՄԵԴԻԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳԻՐ
Պազար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du Journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԵ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղի. ողջ դ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ծախք 25
» » վեցամսեայ » 14
Թղթաստի ծախք խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԹՐՈՐԸ ԵՒ ԱՆՃԷԼ

«Ամերիկացի աւագաններ», ու պատմու-
թիւնը կը յիշէք, հայաբնակ գաւառներէն
միսիոնարներուն հեռացումը պահանջելու մտքը
թուրքերուն կողմէ յերիւրուած խոչը սուտ
մը զոր Եւրոպայի կլլեցնել տալու համար Պոլ-
սոյ ամերիկեան նոր դեսպան Մըթըր Անճէ-
լի տնտէն ալ մէջ խառնած էին, իբր թէ այդ
տեսակ իրողութիւն մը ինքն իսկ տեղեկա-
գրած ըլլար իր կառավարութեան: Բարիկի-
ժուռնալը և Պոլսոյ հազիգաքը՝ իրենց հա-
մերայխաբար կատարուած այս գիւտին յա-
ջողութեանը վրայ պարծենալու ժամանակ չու-
նեցան սակայն, վասնզի հաշտի չէին տուած
Միացեալ Նահանգացի ներկայացուցչին բըռ-
նելը ազգու ընթացքը: Նախորդ դեսպանը
Պ. Թըրըլ, պատուով ու ընծաներով բեռնա-
ւորուած՝ Վաշինգթոն ամերիկեան հեռանալով, իր
երկիրն հասնելուն առաջին գործն ըրած էր
գովարանական հրատարակութիւններ ու յայ-
տարարութիւններ ընել ի նպատակ թուրքերուն
որոնց վայրագութիւններն արդարացունել կը
փորձէր: Այդ թըրքաւէր ամերիկացին, — զոր
անշուշտ հեղեղութեան համար «վեմմալայ»
կը կոչէ Նիւ Եօքի հայրը, — այնքան գէշ
նախընթաց մը ստեղծած էր իր այս վար-
մունքով, ազատական ու ռամկավարական եր-
կրի մը դեսպանին անվայել, որ երբ մէկ կող-
մէ կը քննադատուէր ամերիկեան մամուլին
ու քաղաքական շրջանակներուն մէջ, միւս
կողմէ յոյս մը ներշնչած էր իր «բարեկամնե-
րուն» թէ գծած շաւիղը պիտի շարունակուի
իր յաջորդին կողմէ: Յուսախաբարութիւնը չու-
տով հասաւ: Մըթըր Անճէլ ուղղամիտ, ան-
շահախնդիր և իր ազգին ու կառավարութեան
պատիւը բարձր պահելու հետամուտ անձնա-
ւորութիւն մը, փութաց ազգու բողոք մը
ուղղել Դրան, պահանջելով որ հազիգաքի
հրատարակութիւնը հերքուի նոյն իսկ այդ
թերթի էջերուն մէջ, և իր՝ դեսպանին՝ ստու-
րագրութեամբ: Թուրք մամուլը վարժուած
չէր ասանկ պարտութիւններ կրելու, թէեւ
որ չանցնիր որ եւրոպական այս կամ այն թեր-
թին լուրերը հերքելու ելլէ: Ամերիկացի դես-
պանը խօսքը քաղցուց. աւասիկ իր հերք-
մնազիլը նայում թեմաք:

Չէր լրագրոյն վերջին թիւերէ միայն մէջ ժառ-
նալ տնտէն լրագրէ մը արտատպում մ'ըրած էր
յորում դեսպանատնոյ վերագրուած սուտ լուրեր

կային: Յոռու աղբարութեան կը խնդրեմ որ ձեր
թերթին մէջ նոյն հրատարակութեան տրուած տեղը
հերքմնադրոյս ալ յատկացնէք: Այդ հրատարակու-
թեան մէջ ըսուած էր թէ Ամերիկեան աւագաններ
Պենտոնը մէկ բանի գիւղերու վրայ յարձակեր ու
յետոյ պարտական սահմանադրուելու փոխարէն,
թէ ամերիկացի կին միսիոնար մը ձերբակալուել է
որուն բովն փամփուշտներ գտնուել են զորս խը-
տափարարական նպատակներու պիտի գործածէր,
թէ այս կնոջ փորձարարին աշակերտաց բովն ալ
փամփուշտներ գտնուել են և թէ այս աշակերտը
խտափարարներու լրատուութիւն կընէր և այլն: Այդ,
կը յայտարարեմ թէ բոլոր այս հրատարակութիւնք
սկիզբէն մինչեւ վերջը ճշմարտութեան հակառակ
են, թէ ոչ կարգի բաներ բնաւ չեմ ծանուցած
իմ կառավարութեանս, թէ ինչ այդպէս տեղեկու-
թիւն մը չէ տրուած և թէ այս տեղեկութեանց
ստուգութեանն ալ չեմ հաւատար:

Ստորագրութիւն

Ամերիկեան դեսպան Ջէյմս Պ. Անճէլ:

Այս հերքումը աւատապեցնիք ոչ թէ
անգամ մը եւս հատատեւելու համար «Ամե-
րիկացի աւագաններ» լուրին աւատուել մը
ըլլալը, ինչ որ ապացոյցի կարօտ չէր արդէն,
այլ ցուցունելու համար թէ կամքի տէր դես-
պան մը կրնայ զգացունել տալ իր ազգեցու-
թիւնը և պապանծեցունել այն կէս-պաշտօ-
նական հրատարակութիւնները որոնք բարձա-
նաբի ու զրախօսութեան չափը կանցնին:
Թուրք ժողովուրդը վարժուած չէր ասանկ
հերքումներ կարդալու, և ապահովապէս հա-
զիգաքին prestigeը քիչ մը կտարած ըլլալու
է անոր առջեւ: Եթէ ամեն դեսպան ալ
Մըթըր Անճէլի կրողն ու փութկոտութիւնն
ունենար, առիթը ներկայացած ատեն, մէկէ
աւելի զրգուիչ ու յիմարական լուրերու և
գրուածքներու սահման մը գրուած կըլլար
ճակատադէմ մէջ և անոնց հետեւանք եւ
զոյ անախարհ գէտքեր կարգիլուէին:

ԿԻՆԵՐՈՒ ԼՐԱԳԻՐ ՄԸ

Ժամանակը եկած չէ՞ք կարծեր որ մեր հոյ
կիներն ալ իրենց յատուկ լրագիրը ունենան, ինչպէս
Ֆրանսուէները ունեցան իրենց Frondeur:

Եւ ըստ իս, լրագրութիւնը՝ լանթուանքին այդ
տարագրեալ ձեւը՝ աւելի անպիսի սեւին դիւրամատ-
չելի ըլլալու էր բան թէ մեզի պէս բանիմաստակիր
արարածներուն:

Անգամ մը որ կիները հրատարակագրութիւնը
ձեռք առնեն, օ՛հ, իրաւ այն ատեն լրագրութեան
ոսկեգարին հասած պիտի ըլլանք, կերպնում ձեզի:
Արդի յոգնեցնող խմբագրականները, տաղտուկ
պատճառով տեսութիւնները և թիւում բիւրնները
պիտի անհետանային՝ անոնց յաջորդելու համար ինչ-
նախկին յոգնածներ որոնց նուազ արժէք անեցող

յատկութիւնը պիտի ըլլար փարգադոյն, անուշաբոյր
և բարակ մատներով գրուած ըլլալին:

Ազգային տեսութեան մը տողերուն մէջն ձե-
զի անանկ պիտի գար որ էթոքոքի զգլխիչ բու-
րուները դուրս կուգան և նորավայր մը մէջն էին
մի քուլի միջերեցնող պուտիներ կը կոխկոխին:

Ալ հրապոյրէ և նորութեանց գործ է մեր արդի
լրագրութիւնը. և պէտք է որ մեր նախահայրէն՝
Ազգաբարեկն սկսեալ մինչեւ իր անտակ-որդին Փա-
րազը, ամենքս ալ մեր հրաժեշտը տանք հրատարա-
կին, տեղի տալու համար զոգնացուող Բէշեաննե-
րու, խաբարմալը Այսպիսեաններու և Եփօլքի Ռու-
տալեաներու:

Ինչ ազար պիտի ըլլար արդեօք կանայի լրա-
գրութիւնը, Աստուած իմ: Եթէ իրատարանալ չէք,
ներեցէք ուրեմն որ ձեզի հիմակոյ բանի մը նույն-
ներ տամ՝ ապագայ կնոջն ու լրագրէն՝ խմբագրուած
ի ձեռն հոյ ժիւղիթ Ատաններու, Ժիրերու և Սէլը-
րիներու:

Խմբագրական մը

«Ազգը կը կործանի կոր:

«Երէկի խառն ժողովը նիստը — որուն ներկայ
գտնուեցանք — շատ համալիչ փոստ մըն է մեր բ-
սածին:

«Տիար Սեփոնեան որ Տիտեսական խորհուրդին
կը պատկանի, ծրագիր մը պատրաստած է որով
միջոց մը կը ցուցանէ ազգին՝ Պատրիարքարանի
մուտքը տեղեկել . . . պաշտօնից ամսականները
պոստեցներով:

«Թուարանութեան մէջ շատ զորաւոր ըլլալու
պէտք չ'այ այդ տնտեսական դիտար ընելու համար:

«Խեղափութիւնը նոր եկամուտներ գտնելուն մէջ
կը կայանայ և ոչ թէ ծախքերը նուազեցնելուն մէջ:

«Ազգին այդ խնայողութիւնը ցուցանելէ առաջ
Տիար Սեփոնեան նախ իր տան մէջ մտցնելու էր
խնայողական այդ միջոցները: Մեր մասնաւոր տե-
ղեկութիւններէ կիմանալք թէ Տիար Սեփոնեան իր
երկանը ամիսը 3000 սիլաւթ գնել կուտայ որոնց
կէտը կապուեն տիկնոջ . . . բարեկամները:

«Մեր գաղտնադատութիւնը մեզ չի ներեր աւելի
առաջ երթալ հասկցներու համար Պ. Սեփոնեանին
որ l'économie bien ordonnée commence par
soi-même»

Սօֆի

Նամակ Խմբագրութեան

«Այնքան խմբագրութիւն չուրաք իր:

«Ձեր երէկի թիւին մէջ արժանապատուութիւնս
վրաւորող յօդուած մը երեւցաւ Սօֆի ստորագրու-
թեամբ:

«Այդ գրութեան վրաւորիչ պարտականութեան
սուտ ըլլալը ասկից յայտնի է որ երբէք երկանս սի-
կուլթիները ուրիշին ծխել չեմ տար, սա սրտից
պատճառին համար որ բնաւ չեմ ներած բարեկամնե-
րուն՝ չրթներ ունենալ որոնք ծխախոտ հոտին:

Տիկին Սեփոնեան

Սակարանը

«Արդի շարժումն մէջ շատ փայլուն գործ
գրութիւններ կատարուեցան Ղաթաթիյ սակարանին
մէջ. «Ես սպեղի եւ իմ անցեալ Բոլի» միջ միջ
դնելու քննութիւն և իմ արձանները 18 փայլ զրին
և «Ամսական» գրութիւնը պիտի եւս Լուսնի լինելը:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

15 սակի բարձրացան: Եւ սակերու այս բարձրացումն սա արդիւնքը տուա՞ծ եկաւ որ à la baisse խաղացողներէն Պ. Քիմեանի կինը 3 մետաքսէ չըրջող գլխարկ, 6 տուգինա մետաքսէ գուլպայ բերել տուաւ Բրեքսանէն և 2 գլխարկ կապել տալու վրայ է:»

Բանակոխու մը

«Օր. Մելիքովն» յանդգնած է մեզի դէմ յօդուած մը գրել իր թերթին մէջ:

Ասոր կարեւորութիւն տալու հարկին մէջ չենք տեսներ մենք զմեզ:

Մելիքովն ըստւած արարածը նախ երեսին ներկերը թող արդէ, կործարի տեղ գործածած բամպակները թող մէջտեղ դնէ և անկէջ ետքը կը տեսնուինք:»

Քրօնիկ

«Նինի» այդ մեղքը, վարդէ և փետուրէ շինուած որբեայրին որ իր արցունքները մէկէ տեղի առնուկան կործարելու վրայ ընտրած է ամուսնոյն մեռնելէն ի վեր, յօդուած և զգուած ըլլալով այն կեանքէն ուր տաս տարիէ ի վեր կը գործակի և ուղեւոր իր վաստկած զրամով այլեւս հանգիստ տալիս, կիրակի օր իր լայն անկողինը ծախել տուաւ տեղի նեղ մը գնելու համար:

Նինի այլեւս գործէ կը բաշտի... après fortune faite»

Մեթիսթօֆելա

Պիտի կրնայինք կրնայի յօդուածներու այս շարքը երկարել եթէ Մէթիսթօֆելաի այս յօդուածը երազել չի տար մեզի... ասանց քնացած ըլլալու: ՌԵՏԱՄԵՍ

ՓՈՔՐԻԿ ԳԱՂԵԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԾՆՈՒՆԴԵ

Փարոսի վերջին խնդրականով մեր բարեկամներուն ուղղած հրաւերին, ի նշան պատգամական աղիւս տղաներուն, համակիր ընդունելութիւն գտած է եւ որախ եւնի ծանուցանելու թէ այս յոռւ օրուան մէջ արդէն իսկ 531 1/2 դրոշմ գումար մը ստացած եւնի բարեկամն ազգայիններէ, գումար գոր յանձնեցինք Առաջնորդական Տեղապահ Հօր:

Կը յուսանք թէ այս ազնիւ օրինակն իր հետեւողները պիտի ունենայ եւ յառաջիկայ քիտերով նոր նուիրատուութիւններ եւս հրահրակելու համոյթ պիտի տրուի մեզ, այդ տարաբաղ զանազաններուն իրական օգուտ մը մասնակցելու կարեւորութիւնը:

Ա. Յուցակ Նուիրատուաց

Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտ	50
Տիկին Ն. Աղապար	20
Երկու համետ եղբարք	146 1/2
Գարեգին	10
Տիար Գրիգոր Քըրքովեան	50
Տիկին Բըրլանթի	50
Տիար Կարապետ	30
Փարոսի 6 տարու բարեկամ մը	5
Տիար Բարթիկ Նահապետեան	100
Տիկին Թագուհի Խաչատուրեան	20
Տիար Յովհաննէս Տէրվիշեան	40
Տիար Արգաթ Զ. Մէրամթեան	10

Գումար զը. ողջ 531 1/2

Տիար Բարթիկ Նահապետեան իր դրամական նպատէն գտնաւ յանձնած է մեզ նստել 10 տուգինա քաշկիւնակ, նոյն քաւի նպատակին համար, ինչ որ կրնայ իր հետեւողներն ունենալ, ընտանիքներու կողմէ մասնաւոր որով կրնան մեկմէկ իրեղենով միախառնել տարաբաղ գաղթական տղաները տեսական օրերու մէջ:

Իտալական Սուրհանդակի լուրեր, որոնք ստուգութեան կը կարօտին միշտ:

«Միլանի Սեֆօջօ լրագիրը կիմանայ Կ. Պոլսէ թէ գեկտ. 20էն 21ի գիշերը ստիկաններ ձերբակալելու են որոնք վերջերս հին հասած էին: Ասոնք ամբաստանուած են եղեր իբր թէ Սուլթանին կենաց դէմ դաւադրութիւն մը սարքած ըլլան Սէլամըքի օրուան համար: Դարձեալ նոյն թերթին թղթակիցը կը հաղորդէ թէ գեկտ. 17էն 18ի գիշերը ժէճ-Թիւրքի կուսակցութեան կողմէ յայտարարութիւն մը փակցուել է Պոլսոյ պատերուն վրայ, Սուլթան Մուրատի վիճակին վերաբերմամբ: Ոստիկանութիւնը իսկոյն պատուարէ է այդ յայտարարութիւնները:

«Սփրիկեան Տըրքուլէն Համ հասած լուրերու նայելով, քանի մը հաղար արարներ թուրք կառավարութեան հակառակ ցոյց մը ըրեր են քաղաքին չընտանքի գուրս: Ասոր հետեւանք, շփոթութիւն ծագել է քաղաքին մէջ և խանութները գոցուել են: Անկարգութիւններ ծագել են նաեւ Ամբուսի մէջ, Տրիպոլիոյ մօտ հրեաներուն խանութներն ու տուները աւարի տրուել են (ականջը խօսի Խասգեղի հրեայներուն): Հանգարտութիւնը վերադառնալու համար խրկուած զօրքերը ձերբակալել են գլխաւոր խռովարարները, երեսուն հոգի:

«Դուռը շատ մտահոգութեան մէջ է (միշտ նոյն աղբիւրէ լուրերու նայելով) Պարսից ծոյն արարներուն մէջ ծագած ապստամբական շարժումի մը պատճառաւ: Նախաբարայ խորհրդոյ որոշմամբ՝ սպարապետ Ռիզա փաշա հրաման տալով է օսմանեան բուրժուական շարժումը պահապան զօրքն աւելցունել: Ապստամբութեան իրերէ կեղծուն կը յիշուի Պաղատա: Թուրք պաշտօնական շրջանակներու մէջ կենսադրոն եղեր թէ այս շարժում անգիշտի գործակալներու ձեռքով առաջ կը բերուի և թէ անոր նպատակն է վրէժը հանել այն քաղաքներէն զոր հնդկական սահմանագլուխի ցեղերը ստացան Խալիֆայէն: Մինչեւ իսկ ըսողներ կան թէ Անգլիան պիտի գրաւէ Պաղատա որ Պարսից բանակին է, համապատասխան որ շարժումներու առաջին առնելու համար:»

Եթէ իտալական թերթերուն բոլոր գրածները ստույգ ըլլային, ամբողջ Տաճկաստան պատերազմական վիճակի մէջ պիտի գտնուէր այսօր:

* * *

Երկուշաբթի օրը Աթէնքէն հեռագիր մը կը ծանուցանէր թէ Բրէվէլայի ամբողջ թընդանօթ արձակուած ըլլալով հեղինական մարտանաւերու վրայ, Յունաստան բարեկամաբար բացատրութիւն պահանջած է Թուրքիայէն: Կ. Պոլսէն նորագոյն հեռագիր մը կը հաղորդէ թէ Դուռը յայտնել է Մալթոսի օրտաթօ իշխանին (որ վերահաստատուեցաւ իր գետնական կան պաշտօնին մէջ) թէ Բրէվէլայի միջադէպը թիրախացութեան արդիւնք է:

Էթիոպիայի նկատմամբ արամադրութիւնները փոխուած կերեւին Յունաստանի:

տանի մէջ, և հիմակ ալ տնտեսական կը նկատուի որ անոր դէմ քննութիւն բացուի:

«Օտար նամակատանց պայտուակները ասոր հօլ կերպով տապալելու համար, Կ. Պոլսոյ գետնականներն որոշել են խնդրել պոլիար կառավարութեանէն որ իր սահմանադրութեան մինչեւ Պոլսի պահապաններ ընկերացունէ անոնց: Թէեւ Պոլիարիա հաւանած է այս առաջարկին, բայց կը կարծուի թէ թուրք կառավարութիւնը պիտի ընդդիմանայ:

«Դուռը համաձայնած է Պոլսի Օթօմանին հետ, 140,000 սակի փոխառութիւն մը կնքելու համար:

«Կրէտական գործերու վրայ Թուրքիան ստացած տեղեկութիւնները շատ տխուր կը նկարագրեն իրենց կացութիւնը: Յոյն սպարապետները՝ զայրացած եւրոպական տէրութիւններուն բան մը չընելէն ինչպէս նաեւ Հանկոյի մէջ յաճախակի գործուած սպանութիւններէն, որոշել են եղեր հաղորդակցութեան միջոցները խափանել: Թուրք երեւելիներն ալ, իրենց կողմէ, կառավարիչ մը դանելու փորձերուն անյաջողութեան հարապատճ, բան մը ընել կը խորհին եղեր: Հանկոյի մեծապաշտին հաղորդել է այս տեղեկութիւնները ծովափնային:

«Նախորդ շաբթուն, յունական շոգեհատով մը, Կ. Պոլսէն Բիրէ հասան երեք հարիւրի չափ յոյն գերիներ որոնք պատերազմին մէջ բռնուած էին Թուրքերուն կողմէ և հաշտութեան դաշնագրին կնքման հետեւանք՝ արձակուել են: Այդ գերիներ ցընծութեան աղաղակներով ոտը կոխել են հայրենի հողին վրայ:

«Ռուսիոյ Սինօղը շրջաբերական մը ուղղելով երկրին եկեղեցական իշխանութեանց՝ հրամայել է հանգանակութիւն կատարել Թեսալիոյ ու Եպիրոսի եկեղեցիներուն վերաջինութեան համար որոնք կործանուած կամ այրուած էին Թուրքերուն կողմէ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

«Փորձեալն կրկին փորձել...»

Այս աւետարանական պատուէրին չհետեւելու բարեարտութիւնը հարկադրած է Ազգ. Պատրիարքարանը՝ երկրորդ շրջաբերականով մը վերահաստատել ձեռնարկ բաղդախնդիր վանահօր վրայէն վերցուած արգելքը՝ հոգեւոր պաշտօն վարելու: Աւասիկ պատճէնն այդ շրջաբերականին որ խրկուած է նաեւ Եգիպտոսի Աւաշնորդարանը:

Շ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Կ. Պոլսի, 26 Դեկտեմբեր

Յայտ է Ձեզ ամենեւեռն որ Կիլիկիոյ մի քանի եկեղեցական անցելոյն մէջ Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռոյն նկատմամբ ինչ ինչ անտեղի ձեռնարկութեանց մէջ գտնուած ըլլալուն համար Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովոյ որոշմամբ դադարած էին հոգեւոր պաշտօն վարելը:

Նոյն Կիլիկիոյ եկեղեցականներէն Տ. Նիկողայոս եպիսկոպոս Դաւթեան տարւոյն մայիս 25 թուականու մատուցած մեղադրութիւնն իր եկեղեցականաց կողմէն եղած ձեռնարկութեանց անտեղի ըլլալը ճշդելով և այլ եւս անոնց համաձայն չլինելը յայտնելով՝ խոտուցու ապուհեալ Պատրիարքարանին հակառակ չգործել և խնդրեց միանգամայն որ իր վրայ դրուած հոգեւոր և ազգային պաշտօն վարելու արգելքը բարձուի, ինպէս և որոշմամբ Կրօնա-

ան ժողովոյ արգելքը վերցուցաւ։ Սակայն նա իւր խոստման հաւատարիմ չմնալով՝ այս օրերս առանց ազգային Պատրիարքարանի օրինաւոր արտօնութեան խոյս տուաւ մայրաքաղաքէն, հետեւորար կրօնական ժողովն նախադէպ անոր վրայ դրուած արգելքը վերահաստատելով, որոշեց ծանուցանել ամեն աստիճանի հոգեւոր պաշտօնէից մայրաքաղաքիս և համայն հայաբնակ դաւառոյց, թէ Տ. Նիկողայոս եպիսկոպոս Գաւթեան բաւականաչափ զգրած է հոգեւոր և ազգային սրել պաշտօն վարել։

Ձայս ի գիտութիւն ծանուցանելով համայն եկեղեցական հարց և եղբարց ի ֆրիստոս,

Մնամ աղօթարար

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Կ. Պոլսէն դեկտեմբեր 20 թուականով կը հեռագրեն եւրոպական թերթերուն։

«Թուրքիոյ մէջ յեղափոխական խռովութիւններ հանելու նպատակաւ հայ գործիչներու փորձերուն հետեւանօք, Օրմանեան Պատրիարքը չընդունելով անոր խմբագրած էր եկեղեցիները զրկելու համար, հաւատարմութիւն և հանգամանքներ պատուիրելով։ Ի մեծ զարմանս ամենուն, պալատականները արգելել տուին այդ չընդունելուին տապալութիւնը»։

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Պօղոս փաշա Նուպար որ մէկ ամսէ հետէ անկողնոյ կը ծառայէր, բոլորովին ապաքինած ըլլալով՝ իր պաշտօնի գլուխն անցած է։

Կիմանանք թէ վաղը պիտի բացուի հանգուցեալ Պօղոս էֆ. Կարապետեանի կտակին, որուն մէջ կան անշուշտ ազգային բարենպաստակ հաստատութեանց թողուած գումարներ, ինչպէս կանկալուէր այդ բարեգործ ծերունիէն։

Մեր գրադարապետը՝ Պ. Աստիկ Զատէեան, անդամանելի կորուստ մը ըրաւ իր կնիւ վաղահաս մահուամբ։

Երկուշաբթի օրը հոգին յանձնեցինք Վասիլէհի Զատէեանի մարմինը, հանգուցեալը — հազիւ 27 տարեկան — թէ և համեստ դասակարգի դասակ, բայց իր սրտի ազնիւ զգացումներով, հոգւոյ չքնաղ բարեմասնութեամբ և մտքի ճշմարիտ գարգացումով օժտուած կին մըն էր և եթէ բաղձը քիչ մը աւելի չապշ եղած ըլլար իրեն համար, պիտի կրնայինք զինքը դասել մեր իգական սեռին ամենէն փայլուն շարքին մէջ։

Պարկեշտ կին, պարտաճանաչ մայր և ազնիւ հայուհի, ահա՛ երեք բառով իր ամբողջ կեանքին նկարագիրը։

Պարտականութիւն մըն է որ կը կատարենք իր յիշատակին նուիրելով այս կարճ տողերը որոնց արժէքը իրենց անկեղծ ըլլալուն մէջ կը կայանայ։

Վաղամեակի տիկինը երկու անգամահաս աղջիկ դասակներ կը թողու, Նուարդը և Վերթինին, որոնք անգիտակից մահուան սարսուռին, թեւերին կտրած զոյգ մը տատարակի պէս՝ մայրիկին բացակայութիւնն է, որ կողքան այս պահուս։

Վերջին պահուն ցաւօք կիմանանք թէ Տիար Ներսէս Մաճառեան հոգին աւանդեր է երէկ իրիկուն։

Ինչպէս կը տեսնուի մահազդէն, հանգուցելոյն յուղարկուողութիւնը տեղի պիտի ունենայ այսօր ժամը 2ին։

Այս տխրագոյն իրողութեան հանդէպ՝ վշտաբեկ սրտով է որ մեր ցաւակցութեան ջերմ արտայայտութիւնը կը ներկայացունենք հանգուցելոյն եղբոր Տիար Վաղարշ Մաճառեանի։

ՏԻԱՐ ՎԱՂԱՐՇ ՄԱՃԱՌԵԱՆ, ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՎԵՐԳԻՆԵԱՅ Յ. ՄԱՃԱՌԵԱՆ և իր զաւակները, ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԹՈՎՄԱՍԵԱՆ և իր զաւակները, ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՂԱԶԱՐՈՍ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ և իրենց զաւակները, ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐԱՊԵՏ ԶԷՆՕՅԵԱՆ և իրենց զաւակները, ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐԻՆ ՅԱԿՈԲԵԱՆ և իր զաւակները՝ յաւ ի սիրտ կը ծանուցանեն զդառնալէս կորուստ։

ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ Պ. ՄԱՃԱՌԵԱՆԻ

Իրենց եղբոր, տաքերով, հօրեղբոր, քեռորդւոյն, մօրքեռորդւոյն և ազգականին, որ յետ տաժանելի հիւանդութեան հոգին աւանդեց երէկ, երեկոյեան ժամը 6ին ի հասակի 40 ամաց։

Յուղարկուողութիւնը տեղի պիտի ունենայ այսօր, չորեքշաբթի, ժամը 2ին յետ միջօրէի, հանգուցելոյն Սէպթիէ փողոցի բնակարանին մէջ և անտի փոխադրուելով Ս. Աստուածածնայ եկեղեցին, պիտի ամփոփուի Ս. Մինաս դերեզմանատան մէջ։

Գահիրէ, 29 դեկտեմբեր 1897

ՏԵՂԱԿԱՆ

Պատերազմական պաշտօնատունն հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ կիրակի, կէս օրին, եգիպտական դրօշը պարզուել է Գաւալայի վրայ, թնդանօթներու արձակմամբ ողջունուելով։

— Ուրբաթ օրը իր Շուպրայի պալատին մէջ մեռաւ Ապարս Ա. փոխարքային տղին՝ Ումմէ Հանըմ՝ իշխանուհին, մեծ մայր արդի Խոփին մօր։ Իննըտուն տարեկան էր։

Յուղարկուողութիւնը մեծ հանգէտով կատարուեցաւ որուն ներկայ գտնուեցան Խոփ վական գերդաստանին անդամները, նախարարութիւնը և բարձրաստիճան պաշտօնատարներ։

Ուշագրաւ զուգադիպութիւն մը է Մեռնող իշխանուհին կինն էր այն փոխարքային որուն մառանագետութիւնը վարած էր հանգուցեալ Պօղոս էֆ. Կարապետեան որ միեւնոյն օրը վախճանեցաւ և երկուքին յուղարկուողութիւնները պահ մը իրարու հանդիպեցան։

— Առաջիկայ շաբաթ օր, 8 յունվար, կառավարական բոլոր պաշտօնատունները դոյ պիտի մնան Բարձր Խոփին գահակալութեան տարեդարձին առթիւ։

— Ումմէ Հանըմ իշխանուհին մահուան առթիւ խափական ընտանիքը 40 օր սուգ պիտի պահէ և այս պատճառաւ Ապրիլի պալատին մէջ յունվար 14ի գիշերը սուգով պարահանգէտը յետաձգուած է ուրիշ թուականի մը։

— Գահիրէի վախճանեալ միւֆթիին տեղ Եէյա Հասունա Նաուալի Գահիրէի միւֆթիութեան կոչուեցաւ Խոփ վական հրամանագրով։

— Զրոյց մը կը չըլի որուն համեմատ առաջիկայ շաբաթ մէջ անգլիական նոր զօրագունդեր կապառուին Եգիպտոսի մէջ, Սուտանի բանակը աւելի զօրացնելու և կազմակերպեալ վիճակի մէջ դնելու համար։

Թան իր դեկտ. 21ի թուոյն մէջ սրտաճմրկ պատկեր մը կը դժէ խումբ մը թշուառ հայ գաղթականներու սրտնք երկրէ երկիր թափառական՝ Բաշիզի սալայատակներուն վրայ գացեր ապաստաներ են։

«Սէն-Լաւար կայարանին մօտ հռոմ փողոցը անսովոր ոգեւորութիւն մը կը ներկայացունէր երէկ։ Երեսունի չափ էրիկմարդեր ու կիներ, թուխ դէմքով, ցնցոտիներով ծածկուած և գլուխներն տեսակ տեսակ գդակներ դրած, խմբուած էին մայթին վրայ։ Անոնցմէ ոմանք մինչեւ իսկ կը ջանային կրակ վառել տաշեղներու միջոցաւ զորս հաւաքելու էին, և այս մարդկանց ու աղայոց աղմուկը բարեկեան այդ անկիւնին կուտար տարաշխարհիկ երեւոյթ մը որ ոտակականներուն կարեկցութիւնը շարժեց։ Ասոնք փորձեցին հարցումներ ուղղել թափառաշրջիկ խումբին. բայց մէջերնուն ոչ ոք փրանսերէն կը հասկնար. ուստի ամենքը մէկանց ոտակականութեան դօմիսէր Պ. Կալըի տարին։

«Պ. Կալըի նախ և առաջ նշանացի կերպով հարցուց թէ անօթի՞ էին, որուն հաստատական պատասխան տուին։ Ապուր բաշխուեցաւ անոնց և հայ բերել տուին։ Թաշիկ ընակիչներէն կին մը գլխով այս խեղճ մարդկանց վիճակին վրայ, 100 ֆրանք տուաւ անոնց օգնելու համար։ Երբ որ կազդուրուեցան, սկսան հակցունել իրենց պատմութիւնը։

«Այս գաղթականներ Փորթ-Ասիացի են։ Իրենց ծննդավայրը թուրք էին Սմերիկա երթալու համար և Մարսիլիա հասած էին։ Այդ քաղաքին մէջ գաղթային դորձակալութեան մը անյադ շահասիրութեան զոհ դացած էին որ անոնց ազգային տարազներն ալ առնելով, ցնցոտիներ հազոյցած էր և յետոյ շոգենաւ դրած էր Նիւ-Եօքք զրկելու համար, ուղեգրին վրայ յանձնարարողէք մը առնելէ և իր թղթակցին հասցէն տալէ ետք։

«Բայց ամերիկեան կառավարութիւնը որ գաղթային շարժումին նպաստաւոր չէ, թող չի տուաւ որ ցամաք ելլեն։ Խեղճերը նորէն ֆրանսա դարձան»։

ՅԱՅՎ ՕՔԼՕՔ ԹԻ

Անգլիէրէն այս վերնագիրը կը նշանակէ «Ժամը հինգի թէյ»։

Զինաստանի այդ նրբաթել բոյսը դեռ մեր մէջ տեսակ մը դեղ ըլլալէ չէ դադրած, զոր կուտան երբ մարդ պաղ առած է և կուղէ քրտնիլ։ Մինչդեռ Ռուսիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի ինչպէս նաեւ եւրոպական ուրիշ երկիրներու մէջ թէյը առօրեայ դորձածութեան յատուկ ըմպելի մըն է ինչպէս սուրճը, գինին և մեր Տիւրք կամ մասթիքան։

Զինաստանի և Ռուսիոյ մէջ ահագին առեւտուրի նիւթ մըն է թէյը, և Զարերու երկրին մէջ թերեւս ջուրէ աւելի թէյ կը խմուի... վօսկայէն ետքը։ Բրիտանական երկրներուն մէջ Անգլիա, Սկոթլանդ և Իռլանդ տա միացած՝ 85,000 տակառաշափ թէյ կը

սպառեն տարին: Պրանտացիոնալ բարեկամ այդ ըմպելիին, տարին հազիւ 700 տակառաւ չափ կսպառեն, թէեւ երկու երկիրներուն բնակիչները գրեթէ իրարու հաւասար ըլլան:

Աշխարհիկ ձեւով, եթիքթով թէյ խմելու եղանակ մըն է ժայռ օ'իօֆ քին: Տիկնոջ մը ընդունելութեան օրը, երկուսէն հիւրերը փայլուն և գեղեցիկ սպասներով մեծարուած թէյը կը խմեն, կը խօսակցին, կը բանբանեն և քիչ շատ ալ կը սիրաբանեն:

Թէյը այն է եւրոպական հիւրասիրութեան մէջ ինչ որ է չեվիտին կամ որ և է անուշ մը մեր տուններուն մէջ:

Անդրիական սովորութիւն մըն է այս որ կամայ կամայ Մանչէն անցնելով Պրանտա մտաւ և անկէջ Մէսսաթըլի շոգենուով բերուեցաւ Պոլիս և եգիպտոս ուր կը գտնուին հայ կիներ որ չնորհալի շեշտով ձեզ կը հրաւիրեն իրենց ժայռ օ'իօֆին:

Անուշին ժամանակը ալ անցած է, ուր մարդերը աղու անդ գրուած էին և սրնք կը բաւականանային գգալ մը անուշով որ գոհացում ազգելէ աւելի տաղտուկ կը պատճառէր հիւրին:

Թէյն է այսուհետեւ որ պիտի մեծարուի հիւրերուն, տեսակ տեսակ biscuitներով որոնց ընտրութիւնը տանսիրուհոյն ճաշակէն կախում ունի:

Գանի որ թէյի վրայ կը խօսինք, աւելորդ չենք համարիր մէջ բերել չինական առասպել մը որով չըստատուած է այդ նուրը և անուշաբոյր բոյսին ծնունդը:

Ձինատանցիները կը հաւատան թէ աւանգը ծեր և բարեպաշտ ճգնաւոր մը կար որ գիշերը ցերեկին կը խառնէր շարունակ աղօթելու համար: Բայց հակառակ իր կամքին՝ քունը ստէպ կարգիլէր զինքը իր սիրական աղօթքները անընդհատ շարունակելու և շատ անգամ ալ աչքերը կը գոցուէին նոյն իսկ աղօթած պահուն:

Այս անպատեհութիւնը սաստիկ կը կատուէր զենքէր Լի Հունի Չանիի հայրենակիցը:

Օր մը յանկարծ կատուելով իր բնութեան տկարութեան դէմ, որ արգելքներ կը յաւրուցանէր իր բարեպաշտական զբաղումին մէջ, ինքն իր ձեռքով կտրեց աչքին կոպերը սրնք աղօթքը ընկալէն առաջ մինակնին կը գոցուէին շարունակ քունի ճնշման տակ և արհամարանքով գետին նետեց իրմէ քանի մը քայլ անդին: Այն շատուածը որուն իր աղօթքները կուղղէր, զինքը վարձատրելու համար՝ պղծիկ թուի մը բուսոյց ճիւղ այն տեղը ուր ճգնաւորը իր աչքին կոպերը նետած էր:

Այդ թուիլը, որ մինչեւ այն ատեն անծանօթ էր, թէյի տունին էր, և ասոր համար է, կը յաւելու առասպելը, որ թէյի տերեւները թարթիչներու պէս բարակ ու նուրբ են և իրենց մէջ կը պարունակեն քունը վանելու զօրութիւն մը:

Օ Ր Ա Յ Ո Յ Յ

1898 թ ՈՒԱԿԱՆԻՆ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը ծախուի Փարոսի տպարանը ի գին 60 փաւրաղ:

PASCHAL & C^{IE}

G. G. MEINABACHIS & C^{IE} SUCCESSEURS

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵՆՈՒԹԵԱՆՑ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԵՆԷՆ ԸՆԴԱՐՁԱԿ

ԲԱՍՓԱԼ ԵՒ ԸՆԿ

Գ. Ճ. ՄԵՅՄԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ, ՅԱԶՈՐԴԲ

ԳԱՀԻՐԷ ԷՕԶՊԷՔԻԷ ԳԱՀԻՐԷ

Ձմեռնային նորաձեւութեան մետաքութէններու, բրդեղէններու և այլ այս կարգի ապրանքայ մեծ և բազմաթիւ վաճառում:

Բարիգեան վերջին ճաշակով պատրաստուած գլխարկներու յատուկ վաճառարան և մօտիւղներու վերաբերեալ նիւթեր:

Ն Ո Ր Ճ Ի Ի Ղ

Անգլիական և ֆրանսական ատուեղէններու ինչպէս գերձակներու վերաբերող ապրանքներ:

ՔՐԻՍԹՕՖԼԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՔ

Մեծ մթերանոց սեղանի սպասներու և խոհանոցի առարկաներու:

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՅԱՆՁՆՈՒՆ

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ 4—10

ԳԱՐԹԱԼԻ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

Պոլսէն յափառեալ բերել տուած այս սեղանի համար անառաք գինին կը ծախուի Երուսղ Պողոսեանի խանութը ի Պազար Մուրուր քիւ 42. Գահիրէ ուր կը գտնուի նաեւ զուտ եւ պատուական օղի: 13—16

Advertisement for 'PASCHAL & C' featuring a bottle of 'PILSENER BEER' and descriptive text in Armenian about its quality and origin.

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններու հաղուտներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագեղաններ, ևն. մաքրութիւն, ճշգրտահամարութիւն, և խիստ չափաւոր գին: 8—24

Ա. ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ վաճառատունն Տեաք Յովակիմեան Եղորդ այս անգամ հաւատարմութեամբ և Գահիրէ և Մուսթի փողոցը՝ Լաթէսի գոհարավաճառատան զիմաց բացած են վաճառատուն մը ուր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ֆաբրիկա, գուլպայ և գանձալոյ տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ:

Ճօխ գանձալոյութիւն մարօքների, հոսեղեցներու և արդուզարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրանք: Շեֆիլի հաշակուոր պողոտանոց զօրծիներ, ամեթի, միւս, զմէյի ևն: ԱՊՐԱՆՔ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐ: Գաւառներէն եկած յանձնարարութիւնը ճշգրտ և փութով կը կատարուին: 11—24

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԹԻԱՅԻ ԱՊՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական բազմաթիւ գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ: Թարմ հանգալի ջուրեր, անուշահոտ քիւրք եւն. բնական տիպի և մանրադիտական քննութիւնը: Դեղատոմս կը յաճախեն հայ և օտարազգի ծախիւք բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք տղբատոց համար: 14—50

Ս. ԹԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ, Յ ԹԵՎՖԻԳ փառա փողոց

ՇԱՆՈՒՎ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԴԵՄ

Կերպաններու զանազանութեամբ ու ընտրութեամբ և ձեւի ու ճաշակի կատարելութեամբ այս տան զիմու յաճախողները գոհ պիտի մնան թէ պատրաստուած հաղուտներէն և թէ գիններու չափաւորութենէն: Դիւրամուտչելի պայմաններ: 4—4

ՏՕԻԹՕՐ Կ. ՃԵՐԱՀԵԱՆ

Տօրթօր Կ. Ճերահեան այս անգամ Գահիրէ հատարատուած ըլլալով, իրեն զիմու հիւանդները պիտի ընդունի իր բնակարանին մէջ ի Շարա Բթթ-Պէյ թիւ 2 (ժուրը)՝ Աթֆէթ-Իւլ-Կինէնա) տան օր, բացի կիրակիներէ, առաւօտէն մինչեւ ժամը 3(Յ.Մ.) իսկ ժամը 3էն մինչեւ 5 կարելի է զինքը գտնել Արարատ դեղարանը ի Պէշի-Սուրէն, և 5էն 7 Էօղպէիի վրայ Ֆարմասի տը ըս Պուրս դեղարանը: 8—8



ՃԵՐԱՀԵՂԷՆ ԵՒ ԱՅՆ ԼՈՒԱՆԻ ՀԱՄԱՐ Դ Ո Ր Ծ Մ Ե Ն Յ Է Ք

ԼԷՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ

Մախի եւ ժամանակի խնայողութիւն. — Մաքուրեան կատարելագործութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — Ճերմակեղէններու եւ այլոց հազանիւսում:

ԿԱՐԵՒՈՐ. Լեւալ/սի ժեհին 21 ՄԱՇԵՅՆԵՐ

Երուսղի եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիլօ օտարեկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեգիպոս

Կ. Վ. ԵԿԱԹԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գահիրէ. ՊԱԶԱՐ ՄՈՒՐՈՒՐ 21—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի